

ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒՄ

ՀՍՍՀ ԳԱ Իրաւակից անդամ Ա. Ա. ԱՐԲԱՆՍՅԱՆ

Ստեփանոս Օրբելյանն իր թողած ժառանգութեամբ ու կատարած դերով բացառիկ տեղ ունի հայ միջնադարյան մշակութի և գիտութեան պատմութեան մեջ: Նա հանդես է եկել որպէս իր ժամանակի նշանավոր գիտնական-պատմագիր, բանաստեղծ, հասարակական ու կրօնական գործիչ: Նրա քորթունեությունը ծավալվել է XIII դարի երկրորդ կեսին և հաջորդ դարի առաջին տարիներին: Այդ ժամանակամիջոցը նշանակալից է հայ մատենագրութեան հարստութեամբ և բազմակողմանիութեամբ: Առանձնապէս ճոխ էր պատմագրությունը, իսկ այս բնագավառում ամենախոշոր դեմքը Ստեփանոս Օրբելյանն էր:

Օրբելյանի մատենագրական ժառանգութեան մեջ ամենից արժեքավորը նրա պատմական խոշոր երկն է, որը միաժամանակ իր ճոխ բովանդակութեամբ և շարադրանքի գիտականութեամբ ու հավաստիութեամբ առանց վարանման կարելի է համարել տվյալ ժամանակահատվածի մեր պատմագրութեան պսակը: Այն սիրված է եղել սերունդների կողմից և մեզ է ավանդվել ձեռագրական բազմաթիվ ընդօրինակումներով: Ընդօրինակվել է նույնիսկ տպագիր հրատարակություններից հետո ևս, բավական ուշ ժամանակներում: Սակայն, ցավոք սրտի, մինչև այժմ դեռ չի կազմվել այդ երեւելի երկի գիտական համեմատական բնագիրը և ձեռագրերի ընթերցանքը բոլոր տարբերակներով չի ներկայացվել ընթերցողներին:

Սույն հոդվածում մենք ներկայացնում ենք բնագրագիտական մեր մի քանի դիտարկումները, որոնք այս կամ այն չափով կարող են նպաստել այդ երկի բնագրի որոշ տեւերի ճշգրտմանը, լրացմանը և այդպիսով կօգնեն նրա ճիշտ ճանաչմանն ու ընկալմանը:

1. Ստեփանոս Օրբելյանի կոթողային աշխատությունը տպագրութեամբ ընթերցողին հրամցվել է ոչ հեղինակային խորագրով: Առաջին ամբողջական հրատարակությունը, որ իրագործել է բանասեր Կարապետ Շահնազարյանցը (1859 թ., Փարիզ, երկու փոքրադիր հատորով), կրում է «Պատմություն նահանգին Սիսական» վերնագիրը, որը նույնութեամբ անցել է թիֆլիսյան հրատարակությանը (1910 թ., մեկ հատորով): Նշանավոր հայագետ Մկրտիչ Էմինի կողմից կատարված մոսկովյան հրատարակությունը (1861 թ.) ունի «Պատմություն տանն Սիսական» անվանումը: Հայտնի արեւելագետ ակադ. Մ. Բրոսեն երկի ֆրանսերեն իր թարգմանությունը վերնագրել է «Սյունիքի պատմություն» («Histoire de la Sioumie», Պետերբուրգ, 1864): Հասկանալի է, որ հրատարակիչներն այսպէս են վարվել՝ ելնելով պատմության հիմնական բովանդակությունից:

Սկզբնական, հեղինակային խորագիրը մեզ հուշում է նույն ինքը՝ հեղինակը, որը հարկ է համարել այդ մասին հատկապէս նշելու իր երկի հիշատակարանում, որը միաժամանակ գրքի ՀԳ գլուխն է կազմում: Այնտեղ կարդում ենք. «...եւ գրեցաք զայս քաղցրաբան պատմութիւն հանդէսը զպրութեանց յիշատակարանաց առաջնոցն, ոչ ընդհանրական, այլ առանձին Սիսական աշխարհիս, որ կոչի յիշատակաց մատենան» (ընդգծումը մերն է—Ա. Ա.):

Նթե բանասերները խուսափել են «Յիշատակաց մատենան» անվանումից նրա՝ խիստ ընդհանուր լինելու պատճառով, ապա թերեւս կարող էին օգտվել նրան նախորդող արտահայտությունից՝ «ոչ ընդհանրական, այլ առանձին»:

Սիսական աշխարհիս»։ Այս դեպքում կկոչեն «Պատմութիւն Սիսական աշխարհի»։ Աշխարհ-ը Սյունիքի համար, ըստ հին վարչական բաժանման, շատ պատշաճ է։ Հնում այն ունեցել է «նահանգ», «երկրամաս» և նման այլ իմաստներ։ Բայց հեղինակը պարզ է գրել՝ «...որ կոչի յիշատակաց մատենան», այսինքն՝ «որը կոչվում է «Հիշատակների մատյան»։

Կարելի է ընդունել ավելի ամփոփ անվանումը՝ «Պատմութիւն Սիւնեաց», աշխարհաբար՝ «Սյունիքի պատմություն»։

2. Աշխատության խորագրից հետո և 1-ին գլխից առաջ մոսկովյան հրատարակությունն ունի հետևյալ տողերը. «Հանդէսք բանից քաղցրավէպ Պատմութեանց Տանս Սիսական՝ հրաշահիւս յօրինուածովք յարմարեալ զյիշատակարանս հնոց նուաստ և ապիկսր հոգւոյ Ստեփաննոսի՝ Սիւնեաց ացցելուի և նախագահ մետրապօլտի, որդւոյ մեծափառ իշխանաց իշխանի Տարսալիճի, որ և կոչի սա յիշատակ յայնմ ատուան»։ Սա չկա փարիզյան հրատարակության մեջ, չկա նաև վերջինիցս արտատպւած թիֆլիսյան հրատարակության մեջ։ Ըստ ձեռագրական տվյալների՝ պիտի ներառվի։

Հիշյալ տողերի վերջի յիշատակ յայնմ ատուան արտահայտությունը, սակայն, չի հասկացվում և պարզ երևում է, որ բացահայտ աղավաղության արդյունք է։ Մինչև ձեռագրական համեմատություն կատարելը մենք ենթադրում էինք, որ դա հենց աշխատության սկզբնական, հեղինակային անվանում է՝ «Յիշատակաց մատենան», ուստի և գտնում էինք, որ պետք է աղավաղումն ուղղել և արտահայտությունը վերականգնել այդ ձևով։

Համեմատության համար մենք վերցրել ենք լավագույն ձեռագիրը, որը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում՝ 6271 համարի տակ և վերաբերում է 24Բ (=962+551=1513) թվականին։ Համեմատությունը հաստատեց մեր ենթադրությունը, միայն պետք է տեսել, որ ձեռագրում ևս նկատելի աղավաղում է եղել, և արտահայտությունը կարդացվում է յիշատակաց մատենան (էջ 7բ)։

3. Փարիզյան հրատարակության «Աստանօր եղև սկիզբն եպիսկոպոսութեանս Սիւնեաց» նախադասությունը (հ. 1, էջ 59--60) պակասում է մոսկովյան տպագրության մեջ, թեև այստեղ տողատակում նշվում է, որ ձեռագիր երկու օրինակում կա։ Հիշյալ նախադասությունն ունի նաև № 6271 ձեռագիրը (էջ 18ա)։ Ամենայն հավանականությամբ դա գալիս է երկի սկզբնագրից և հետևաբար՝ ճիշտ կլինի ընդգրկել բնագրի մեջ։ Միայն պետք է հաշվի առնել, որ տպագրի օ-ով գրությունը ձեռագրում հնագույն աւ ձևով է՝ աստանաւօր (աստանօր), որը հատուկ է այդ ձեռագրին ընդհանրապես։

4. Փարիզյան հրատարակության «...և ոմանք ղօղեալք ի լերինն Դարուայ միայնաւորութեամբ զկեանս իւրեանց վարէին զբաղումս ուսուցանելով բաղում ժամանակօք...» նախադասության մեջ (հ. 1, էջ 62) գործածված Դարուայ անվանաձևը ճիշտ չէ (որը նույնությամբ անցել է թիֆլիսյան հրատարակությանը)։ Մոսկովյան հրատարակությունն այդ հատուկ անունը ներկայացնում է Դարու ձևով (ի լերինն Դարուայ)։ Մ. Բրոսեն Օրբելյանի երկի իր կատարած ֆրանսերեն թարգմանության մեջ տվել է Daron ձևով¹։ Ղ. Ալիշանը, հենվելով իր ժամանակի հնչման, ինչպես նաև այլ վկայությունների վրա, ընդունել է Դարու ձևը²։ Ժիշտը այս Դարու ձևն է։ Դա հաստատվում է նաև № 6271 ձեռագրով (տե՛ս էջ 19բ՝ ի լերինն Դարուայ)։

5. Երկի Բ գլխում գործածված Աթալիսյա հատուկ անունը (գործածվել է մեկ այլ տեղ ևս) Մ. Բրոսեն ընկալել է ստուգաբանորեն (իրանյան ծագումով) և հասկացել ու թարգմանել է որպես հասարակ անուն՝ «կրակի պահպան» իմաստով, հոգնակի թվով՝ les gardiens de feu։ Ժիշտ պատկերացում կազմելու համար հիշենք բնագիրը։ Փարիզյան հրատարակության մեջ կար-

¹ Հմմտ. Histoire de la Siounie par Stephannos Orbelian, traduite de l'arménien par M. Brosset. Saint-Peterburg, 1864, p. 12.

² Հմմտ. Ղ. Ալիշան. Սիսական. Վենետիկ, 1893, էջ 448։

դում ենք. «Եւ Աթաշխոգա ինքն պարսկական գնդովն իւրեանց ի փախուստ դառնալին ի սաստիկ յահի ելանելով» (Հ. 1, էջ 73): Եթե այստեղ կասկած է առաջացել լատորոգչալի հոգնակիությունը (ի փախուստ դառնալին), ապա պետք է ասել, որ նման կառույցներում հոգնակիությունը բացառված չէ (ինքն պարսկական գնդովն իւրեանց ի փախուստ դառնալին), թեև սիրված ու տարածված ոճ չէ: Իսկ մոսկովյան հրատարակությունն արդեն ուղղակիորեն փարատում է այդ կասկածը: Այնտեղ ասված է. «Եւ Աթաշխոգա ինքն պարսկական զինված ի փախուստ դառնալը ի սաստիկ յահի ելանելուն» (էջ 23): Այս հրատարակության համար հիմք ծառայած ձեռագրից եկող սույն տարբերակը հավանական և ընդունելի է, միայն պետք է նկատի ունենալ, որ հաջող չէ վերջին բառածիր՝ ելանելուն, որը թերևս պիտի եղած լինի ելանելով: № 6271 ձեռագրին գրեթե նույնական է փարսիական հրատարակության վերը բերված Նախագասությունը, միայն ձեռագրում Աթաշխոգա փոքրատառով է, մի բան, որ ընդհանուր երևույթ է այդ ձեռագրի համար: Եվ արդեն նշել ենք, որ Նախագասության այդպիսի կազմությամբ էլ գիտակցվում է, որ Աթաշխոգա հատուկ անուն է, որը կրել է պարսկական զորապետներից մեկը: Դա անկասկած է նաև հետևյալ փաստով: Մովսես Կաղանկատվացին, խոսելով հասապատասխան դեպքերի մասին, Աթաշխոգային ներկայացնում է որպես պարսկական զորավար: Այսպես. «...Ահա ցեալք ի բոց գնացին գունդքն Պարսից հանդերձ Աթաշխոգայի զօրսպետի իւրեանց»³ (ընդգծումը մերն է— Ա. Ա.):

Երկրորդ գործածությունն այսպիսին է. «...Որոց ղկնի պնդեալ անիծեալ Աթաշխոգային շարահնար ղորօքն Պարսից...» (փարսիական հրատ., Հ. 1, գլ. ԺԲ, էջ 110), «Որոց ղկնի պնդեալ ղորացն Աթաշխոգայի...» (մոսկովյան հրատ., գլ. ԺԸ, էջ 19): № 6271 ձեռագրում. «...Որոց պնդեալ անիծեալ զաւրացն ախաշխոգային շարահնար պարսկացն...» (էջ 51բ): Սա, իհարկե, ընդունելի է ուղղագրական ճշտումներով: Այս բոլոր դեպքերում Աթաշխոգա պետք է ընդունել որպես հատուկ անուն, որ կրում էր ժամանակի պարսկական մի զորապետ: Իսկ դրանից զատ ճիշտ է նրա ստուգաբանությունը. կրակապաշտ զինվորներն ընդհանրապես կարող էին կոչվել աթաշխոգա «կրակի պահապան»: Բայց այս երկրորդ գործածությանը ստորև պիտի անդրադառնանք մի ուրիշ տեսակետից:

6. Աղավաղություն է նկատելի բնագրի հետևյալ տեղում. «...և արդ գաւազանին ուր խնդիր առնես քաղեակ (կամ քաջեակ) տէր» (փարսիական հրատ., Հ. 1, էջ 85): Մոսկովյան հրատարակության մեջ այսպես է. «...և արդ գաւազանին ուր խնդիր առնէ նքողեալ տէր այն» (էջ 31): Երկուսն էլ վերջին մասով անհասկանալի են բացահայտ առճատման պատճառով: Հայերենը չի ունեցել և չունի քաղեակ բառ: Փակագծում հրատարակչի կատարած կամ քաջեակ նշումը ևս դրույթներ չի փրկում: Խոսքային տվյալ միջավայրում անիծանալ է նաև մոսկովյան հրատարակության առաջարկած նքողեալ-ը: Բացի դրանից, այստեղ 2-րդ դեմքի փոխարինումը 3-րդով չի պատշաճում տվյալ հատվածի երկխոսության համար (հարցումը ուղղակի է և պիտի մնար 1-ին դեմքով):

Աղճատումն ուղղելու համար որոշակիորեն օգնում է № 6271 ձեռագիրը, որն ունի «և արդ գաւազանին ուր խնդիր առնենք աղեակ տէր աստուծոյ» (էջ 34բ):

Կարծում ենք՝ աղեակ-ը միջին դարերում մեր լեզվում արդեն իրեն զգալ տվող ալեկ բառի հավանական տարբերակն է՝ «լավ, բարի» իմաստով: Այդպիսի վերականգնումով կունենանք. «...և արդ գաւազանին ուր խնդիր առնենք (առնեմք), աղեակ տէր աստուծոյ», այսինքն՝ «Եվ այժմ գավազանը որտե՞ղ փնտրենք, աստծու բարի տեր»: Քահանան դավազանը գցել է խոտի դե-

³ Մովսիսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի. Թիֆլիս, 1913, էջ 122. նույնը և համեմատական բնագրում (Վ. Դ. Առաքելյանի կազմած). Երևան, 1983, էջ 109:

դի մեջ և դեզն այրվել է, մարդիկ այն պիտի գտնեն, ուստի այդպիսի հարցով դիմում են քահանային (հեղինակը զավեշտով է ներկայացնում քահանայի արկածները):

7. Տպագիր բնագրի ԺԱ գլխի վերջին մասում մի նախադասության շարունակությունն ընդմիջված է մեկ ուրիշ նախադասությամբ: Անհրաժեշտ է նախադասությունների վերադասավորությամբ վերացնել այդ ընդմիջարկվածությունը և միացնել համապատասխան նախադասությունները: Ահա այդ հասվածը. «Եւ զսրճեալ՝ կանանց ոչ հրամայեցաւ ի նմանէ ի սուրբ եկեղեցին մտանել. և այսու կարգաւորութեամբ կրօնիւք եկաց լուխտն յսուրբ եկեղեցւոյն Շաղատայ մինչև յամս 300. և ոչ դարձեալ կանամբի քահանայի սպասաւորութիւն անել սրբութեան տեղոյն» (փարիզյան հրատ., հ. 1, էջ 87): Պարզ նկատելի է, որ մեր ընդգծած մասերը մեկ սմբողջական նախադասության երկու տարրեր հատվածներն են, որոնց մեջ ընկած է շրջագծվածը: Մոսկովյան հրատարակության մեջ էլ հիմնականում նույնն է, միայն այստեղ չկա ուլտն բառակերպ, որ փարիզյան տպագրության մեջ ավելացրել է հրատարակելիք՝ սուրբ եկեղեցւոյն բառակապակցության պատճառով: Մոսկովյան տպագրության մեջ Եկեղեցի բառը դրված է ոչ թե սեռական, այլ՝ ուղղական հոլովով՝ սուրբ եկեղեցի Շաղատայ, որը շատ ճիշտ է և ամենայն հավանականությամբ գալիս է սկզբնագրից: Դա հաստատում է № 6271 ձեռագիրը, որն ունի սուրբ եկեղեցին Շաղատայ բառակապակցությունը (էջ 26ա):

Դրա հաշվառումով մենք առաջարկում ենք բնագրի այս հատվածն ուղղել այսպես. «Եւ դարձեալ՝ կանանց ոչ հրամայեցաւ ի նմանէ սուրբ եկեղեցին մտանել, և ոչ կանամբի քահանայի սպասաւորութիւն ալ լինել սրբութեան տեղոյն. և այսու կարգաւորութեամբ կրօնիւք եկաց սուրբ եկեղեցին Շաղատայ մինչև յամս 300»: Այսպիսով ճշտվում է շարադրանքի տրամաբանական հաջորդականությունը:

8. Խոսքով դեռ հին ժամանակներից Այունիքի գյուղերի դիրքի և իրավունքի աստիճանակարգության մասին՝ ըստ վարչական բաժանման՝ Ստեփանոս Սրբելյանը գրել է. «Եւ դարձեալ՝ Շաքուց և Աղիտուայ հրամայեցաւ զկնի Շաղատայ զնախադասութեան ունել զվհագոյնն զերկրորդականն զտատի» (գլ. ԺԲ, փարիզյան հրատ., հ. 1, էջ 89): Մեր ընդգծած զերկրորդականն բառակնի տեղում մոսկովյան հրատարակությունն ունի զերկրորդականն (էջ 33), № 6271 ձեռագիրն ունի զերկրորդականն (էջ 27բ—28ա):

Ըստ շարադրանքի՝ պիտի նշված լինեն Շաղատից հետո մեկին (Շաքիին) երկրորդական, մյուսին (Աղիտուն)՝ երրորդական տեղը (պատիվը). ոչ թե երկուսին միաժամանակ երկրորդը, այլ՝ մեկին երկրորդը, մյուսին՝ երրորդը:

9. Փարիզյան հրատարակության մեջ վերը հիշված «...որոց զկնի պընդեալ անիծեալ Աթաշխոդային շարահնար զօրօքն Պարսից» ձևակերպումը նշանակում է, թե անիծյալ Աթաշխոդան պարսկական շարահնար գործքերով հետապնդել է փախստականներին: Մոսկովյան հրատարակության «...որոց զկնի պընդեալ զօրացն Աթաշխոդային» ձևակերպումը նշանակում է, որ նրանց (փախստականներին) հետապնդել են Աթաշխոդայի գործքերը: Այստեղ կան զգալի բացթողումներ: Համեմատությունը № 6271 ձեռագրի հետ ցույց է տալիս, որ սրան ավելի մոտ է կանգնած փարիզյան հրատարակության համապատասխան մասը: Այս դեպքում չսխալվելու համար պետք է հենվել փարիզյան հրատարակության և ձեռագրի վրա:

10. Փարիզյան հրատարակության մեջ ԻԱ գլխի սկզբնամասում կա բնագրի աղավաղություն: Ահա այդ մասը. «Որպէս գիտոյ արար ինչ [մի] վարկցիս դառաջի եղեալս բան, և առաւելախոյզ զիս ծանիցես. այլ պատշաճ և ի դէպ մերումս ձեռնարկութեան զի զՍիսական աշխարհի սկսաք ճառել զվէպս» (հ. 1, էջ 121): Նույնը և թիֆլիսյան տպագրության մեջ (էջ 79): Հրատարակելիք միջամտություն է կատարել՝ փակագծում ավելացնելով ժխտական մի ասանիկը (թեև առանց շեշտի), որովհետև սկզբից բացակայում է ոչ-ը, որի գոյությունն անհրաժեշտ է:

Հատվածը մի փոքր ավելի բարձր վիճակում է ներկայացված մոսկովյան Հրատարակության մեջ. «Ոչ վայրապար ինչ վարկցիս զառաջի եղեալսն և աւելախող զիս ծանիցես, այլ պատշաճ և ի դէպ մերումս ձեռնարկութեան զի զՍիսական աշխարհիս սկսաք ճառել զվէպս» (զլ. Ի, էջ 57): Բայց սա էլ, ըստ երևույթին, ամբողջական ու ճշգրիտ չէ: Դա պարզվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 6271 ձեռագրի համեմատությամբ: Այստեղ գրված է այսպես. «Ո՛վ դու մի՛ վայրաբար ինչ վարկցիս զառաջի եղեալս բան և աւելախող ողիս ծանիցես. այլ պատշաճ և ի դէպ մերում ձեռնադրութեան զի զսիսական աշխարհի սկսաք ճառել զվէպս» (էջ 58ա—58բ): Այստեղ, իհարկե, կան և՛ այնպիսի բառեր, որոնց բացակայությունը վերոբերյալ տարբերակներում դժվարացնում է բովանդակության բնկալումը (ո՛վ դու), և՛ ուրիշ տարբերություն (վայրաբար—վայրապար, ձեռնադրութեան—ձեռնարկութեան): Թվում է, ին բոլորի մեջ էլ աւելախոյզ-ը պիտի լիներ աւելախոս: Այս բոլորի հաշվառումով հավանաբար մոտենում է՝ թ հեղինակային շարադրանքին, որը հասկացվում է այսպես. «Ո՛վ դու, [ընթերցող], առաջիկա խոսքս անտեղի չհամարես և ինձ էլ շատախոս չկարծես. ընդհակառակն, սա համապատասխան ու հարմար է մեր այս ձեռնարկմանը...»: Իսկ մնացած մասն արդեն անմիջականորեն բովանդակությամբ կապվում է հաջորդ նախադասության հետ: Ուստի այստեղ պետք է վերջակետ դնել և բնագրի տողերը շարունակել մինչև ալ. նախադասության վերջը: Այսպես. «Զի զՍիսական աշխարհի սկսաք ճառել զվէպս, վասն որոյ հարկ է ամենայնիւ զեղեալսն ի սմա գործս և հրաշս ցուցանել ձեզ...», այսինքն՝ «Քանի որ սկսեցինք շարադրել Սիսական աշխարհի պատմությունը, ուստի և անհրաժեշտ է ցույց տալ այստեղ կատարված բոլոր գործերն ու հրաշքները»:

Բանն այն է, որ հեղինակը, իր սովորության համաձայն, երբեմն դիմում է անորոշ ընթերցողին ու խորհրդածում իր անելիքների մասին: Այստեղ էլ վարվել է հենց այդ ձևով:

11. Երկի իմ գլխում պատմվում է Սյունիքի մի քանի եպիսկոպոսների, նրանց թվում և Պետրոսի մասին (որի ճառերը և ներբողները սկզբնաղբյուր են ծառայել Ստեփանոս Օրբելյանի աշխատության որոշ մասերի համար): Այստեղ Պետրոսը ներկայացվում է որպես Սյունիքի 9-րդ եպիսկոպոս ու բնութագրվում է մեծ գովեստներով՝ իբրև հայտնի գիտնական, բերթող, փիլիսոփա, թարգմանիչ մատենագիր: Պաշտոնով հաջորդել է Մակար եպիսկոպոսին: Այսպես. «Երանելին Երիցյակ կալեալ զաթոռ եպիսկոպոսութեան ամ մի՛ փոխի ի վերին քաղաք...: Իսկ յետ նորա՝ արժանապատիւ աշուն Աստուծոյ Մակար՝ ամս 28: Եւ ապա բաղմերջանիկն և անհամեմատելին ի մարդկան է Պետրոս՝ աշակերտ բերթողահօրն, քուջ հոետորն և անյաղթ փիլիսոփայն, լի իմաստութեամբ և կատարեալ առաքինութեամբ. նախաթոռ վարդապետաց Հայոց, բերթող և թարգմանիչ»: Այնուհետև խոսվում է նրա մատենագրական ծառանգության մասին: Իսկ պաշտոնի մասին ասվում է. «Ձեռնագրի սա ի ներսիս է Հայոց կաթողիկոսէ, ի մարդպանութեանն Վահանայ Մամիկոնոյ իննեւորորդ եպիսկոպոս Սինեաց»:

Այստեղ նկատելի են պատմական անճշտություններ: Եթե Մակար եպիսկոպոսը նախորդել է այս Պետրոսին՝ իշխած լինելով 28 տարի, ապա Պետրոսը չէր կարող Սյունիքի եպիսկոպոս նշանակված (կամ ձեռնադրված) լինել Վահան Մամիկոնյանի մարզպանության օրոք, այն էլ ներսես (Բ) կաթողիկոսի կողմից: Չէ՞ որ հայտնի է՝ Մակար եպիսկոպոսը աթոռակալել է 510 կամ 511 թ., և, ինչպես պատմիչն էլ նշում է, նրա պաշտոնավարությունը տևում է 28 տարի: Նշանակում է՝ Պետրոսը պիտի սկսեր զահակալել 538 կամ 539 թ. հետո: Բացի դրանից, եթե նրան ձեռնադրողը ներսես Բ (Բագրևանդացի—նաև՝ Աշտարակեցի) կաթողիկոսն է (ներսես 1-ինը չէր կարող լինել), ապա սա էլ շատ հետո է Վահան Մամիկոնյանի մարզպանության ժամանակներից (V դարի վերջին տասնամյակներ և VI դարի սկիզբ): Հայտնի է, որ ներսես Բ՝ կաթողիկոսն աթոռակալել է 548—557 թթ.: Ուրեմն այդ ժամանակամիջոցում Պետրոսը կարող էր նշանակված լինել Սյունիքի եպիսկոպոս: Սակայն Օրբել-

յանի ուրիշ նշումները ավելի են խճճում խնդիրը: Նա նույն գլխի շարունակության մեջ դրում է. «Սա (այսինքն՝ Պետրոսը—Ա. Ա.) գնաց ընդ այլոց վարդապետաց Հայոց Մամբրէի, Եզնկայ, Կորեան, Դաւթի ի Թագաւորական քաղաքն Կոստանդնուպօլիս. և հանդիպեալք ի ժողովն Քաղկեդոնի՝ յոյժ մարտուցեալ ընդ շարափառացն, պարտեալ ըմբերանեցին և յամօթ արարեալ զամենեւնսն՝ և կին մեծաւ ճոխութեամբ, ողջամիտ վարդապետութեամբ յաշխարհս Հայոց...»:

Ինչպէ՞ս կարելի է համատեղել: Եթէ Սյունիքի այս եպիսկոպոս Պետրոսը եղև էր քերթողահոր (այսինքն՝ Մովսէս Խորենացու) աշակերտը, որը չէր կարող եղած լինել V դարի երկրորդ կեսից առաջ, ապա ինչպէ՞ս կլինէր այս Պետրոսի ընկերակցութիւնը Եղնիկի, Կորյունի, Մամբրէի և ուրիշների հետ, որոնք, իրոք, գործուղվել էին Կոստանդնուպօլիս և, օգտուելով պատեհ առիթից, մասնակցել նաև Քաղկեդոնի ժողովին ու հանդես եկել քաղկեդոնականութեան դեմ: Եթէ, իրոք, Սյունիքից Պետրոս տնտնով մի մտավորական մասնակցել է Մեսրոպ Մաշտոցի աշակերտների այդ խմբին, ապա դա երբեք չէր կարող լինել 9-րդ եպիսկոպոս Պետրոսը, որն այդ ժամանակ ծնված էլ չէր լինի: Թերևս պատմիչն այստեղ շփոթում է մեկ ուրիշ Պետրոսի, որի մասին մեր մատենագրութեան մեջ հիշատակութիւն չկա կամ չի պահպանվել⁴:

Այս կապակցությամբ Ստեփանոս Օրբելյանի երկի բնագիրը կարիք ունի մեկ ուրիշ ճշգրտման: Նույն գլխում ասված է. «Սա (այսինքն՝ Պետրոս եպիսկոպոսը—Ա. Ա.) գնաց ի ժողովն Դնայ յառաջինն, որ եղև հրամանաւ Երեսիսի կաթողիկոսի վասն խոժկացն Նեստորականաց»: Խոսքը վերաբերում է ի ժողովն Դնայ յառաջինն արտահայտութեանը, որտեղ պարզորոշ հասկացվում է «Դվինի առաջին ժողովը»: Կանոնավորապես համաձայնեցված են լրացալը և լրացումը՝ ի ժողովն յառաջինն (ուղևորութեան հայցականով): Ուրեմն՝ Պետրոսը զնացել է Դվինի առաջին ժողովին, մասնակցել է Դվինի առաջին ժողովին: Նշանակում է՝ նեստորականութեան դեմ ուղղված այդ ժողովը պատմիչը թվով առաջինն է համարում: Բայց չէ՞ որ հայտնի է՝ քաղկեդոնականութեան դատապարտման ու մերժման հստակ Դվինում գումարված առաջին ժողովը կայացել է ավելի վաղ՝ 506 թ.: Պարզ է, որ առաջինի փոխարեն այստեղ պիտի նշվեր երկրորդը: Իսկ եթէ մտածենք յառաջինն բառաձևը հասկանալ «առաջինը լինելով», այսինքն՝ թէ Պետրոսը այդ ժողովին մասնակցել է առաջինը լինելով, որպէս պիտավոր կազմակերպիչ, զա ևս դրսևորում չի փրկի, քանի որ բնագրում պարզորոշ նշված է, որ ժողովը գումարվել է Ներսէս կաթողիկոսի հրամանով: Իսկ առաջին ժողովի ժամանակ հայոց Ներսէս կաթողիկոս չի եղել: Ինչպէս տեսանք, խոսքը վերաբերում է Ներսէս Բ-ին (Բագրևանդացուն, Աշտարակեցուն), որի աթոռակալութեան ժամանակամիջոցի մասին նշեցինք վերջ: Դվինի այս 2-րդ ժողովը, որ հրավիրվել է 554 թ., իրոք, քննարկել է նեստորականութեան դեմ պայքար ծավալելու հարցը և, իհարկէ, ալդ հիմնական հարցի հետ միասին նաև տոմարական, կրոնական և այլ հարցեր:

12. Երկի փարիզյան հրատարակութեան մեջ ԻԳ գլխի մի հատվածում սխալ կետադրութեան ու գրութեան, այլև հրատարակչի ոչ տեղին միջամտութեան պատճառով բովանդակութեանն այնպիսի մեկնաբանութիւն է տրված, որ աղավաղում է իրական վիճակը: Ընթերցողին իրազեկ պահելու նպատակով նախ ասենք, որ դա վերաբերում է հայոց Հովհաննէս կաթողիկոսի և եպիսկոպոսների ու մի շարք իշխանների թղթին՝ ուղղված Սյունիքի Վրթանէս եպիսկոպոսին ու իշխանին: Լսելով, որ նեստորական աղանդը, Խոժիստանում արագ թափով տարածվելուց հետո, թափանցել է նաև Սյունիաց աշխարհը, ներքանք խիստ անհանգստացած դիմում են տեղի հոգևոր և աշխարհիկ ղեկավարներին՝ զգուշացնելով աղանդի վտանգավորութեան մասին և կտրուկ մի-

⁴ Սյունիքի Պետրոս եպիսկոպոսի գործունեության ժամանակագրական անպատեհությունների մասին ավելի մանրամասն տե՛ս ուրիշ երկի ֆրանսերեն թարգմանության համապատասխան ծանոթագրությունը (հ. 1, էջ 53—54, ծան. 2):

չոցներ ձեռնարկելով: Ահա մեզ հետաքրքրող հատվածը. «Վասն զի ի հաւատարիմ մարգկանէ լուաք եթէ պիղծ նեստորականք բազումք և ի ձեր աշխարհիդ են բնակեալ. և դուք զդոսա ի սուրբ եկեղեցի ընդունիք և ընդ դոսա հաղորդիք [ուշ] յիշելով ձեր զսրբոյն Գրիգորի զմեծ վաստակ և զջան, որ ի մեր և ի ձեր աշխարհիդ վերայ հասարակաց, և զսուրբ ծնունդն զոր սրբով աւաղանաւն վերստին ծնայք, և զլուսատւոր և զճշմարիտ հաւատն զոր մեք և դուք ընկալաք և այժմ ունիմք. և զհոգևոր սէրն զոր ընդ ձեզ ունիմք առաւել քան զամենայն»:

Զայդ հոգ կալաք յանձին հեռացուցանել և ի ձէնջ զշարի որոմանն սերմանս...» (հ. 1-ին, էջ 136): Այսպիսով յիշելով բառաձևով սկսվող նախադասությունը խառնված է նախորդ մասին, որը պիտի տրոհված լինէր ստորակետով, ուստի սխալ ըմբռնելով՝ հրատարակիչը փակագծում ավելացրել է ոչ մասնիրը՝ հասկանալով «ուշ յիշելով», որը ճիշտ է: Այսպէս՝ ծնանել բայը չպետք է գրվի 2-րդ դեմքով (ծնայք), այլ պիտի լինէր 1-ինով, քանի որ խոսքը հավասարապես վերաբերում է երկու կողմերին էլ (մեք և դուք ծնալ), Զայդ հոգ կալաք-ով սկսվող մասը պետք է միացնել նախորդին՝ միայն անջատելով ստորակետով և ոչ թե վերջակետով և այլն: Նույնը թիֆլիսյան արտատպության մեջ:

Դրությունն ավելի լավ է մոսկովյան հրատարակության մեջ, բայց այստեղ էլ բացթողում կա: Այսպես. «Վասն զի ի հաւատարիմ մարգկանէ լուաք, եթէ նեստորականք բազումք և ի ձեր աշխարհիդ են բնակեալ և դուք զդոսա ի սուրբ եկեղեցիս ընդունիք և ընդ դոսա հաղորդիք. յիշելով մեր զսրբոյն Գրիգորի զմեծ վաստակ և զջանս որ ի մեր և ի ձեր աշխարհիդ վերայ հասարակաց և զսուրբ ծնունդն, զոր սրբով աւաղանաւն վերստին ծնաք, և զճշմարիտ հաւատն, զոր մեք և դուք ընկալաք և այժմ ունիմք, և զհոգևոր սէրն զոր ընդ ձեզ ունիմք առաւել քան զամենայն հոգ յանձին կալաք հեռացուցանել ի ձէնջ զշարի որոմանն սերմանս» (գլ. ԻԲ, էջ 68):

Ճիշտ կողմնորոշվելու համար օգնում է № 6271 ձեռագիրը, որտեղ ասված է. «Վասն զի ի հաւատարիմ մարգկանէ լուաք եթէ պիղծ նեստորականք բազումք և ի ձեր աշխարհիդ են բնակեալ, և դուք զդոսա ի սուրբ եկեղեցի ընդունիք և ընդ դոսա հաղորդիք: Յիշելով մեր զսրբոյն Գրիգորի զմեծ վաստակ և զջան, որ ի մեր և ի ձեր աշխարհիդ վերայ հասարակաց, և զսուրբ ծնունդն զոր սրբով աւաղանաւն վերստին ծնաք. և զլուսատւոր և զճշմարիտ հաւատ զոր մեք և դուք ընկալաք. և այժմ ունիմք. և զհոգևոր սէր զոր ընդ ձեզ ունիմք առաւել քան զամենայն. զայդ հոգ յանձին կալաք հեռացուցանել և ի ձէնջ զշարի որոմանն սերմանս» (էջ 68ա):

Այստեղ յիշելով բառաձևից առաջ հատվածն անջատված է վերջակետով (ինչպես մոսկովյան հրատարակության մեջ էլ՝ միջակետով), որտեղ բավական կլինէր ստորակետը: Այլն բնագրային մի շարք իրողություններով վերանում է աղճատվածությունը, և բովանդակությունը հասկացվում է պարզությամբ:

Տալիս ենք հատվածի աշխարհաբար թարգմանությունը. «Քանի որ հավատարիմ մարգկանցից լսեցինք, թե բազմաթիվ պիղծ նեստորականներ կան ձեր: աշխարհում բնակված, և դուք դրանց ընդունում եք սուրբ եկեղեցիներում ու հետևե՛ր հաղորդություն ստանում, մենք, հիշելով մեր սուրբ Գրիգորի մեծ վաստակն ու ջանքը մեր և ձեր աշխարհի վրա հավասարապես և այն սուրբ ծնունդը, երբ սուրբ մկրտությունք վերածնվեցինք, լուսավոր ու ճշմարտացի հավատը, որը միասին ընդունեցինք ու այժմ էլ պահում ենք, և այն հոգևոր սերը, որ տաժում ենք ձեր նկատմամբ ամենից առավել, հոգ տարանք ձեզանից հեռացնել շար որոմի սերմերը»:

13. Ստեփանոս Օրբելյանը, իր աշխատության ԻԴ գլխում անդրադառնալով հայկական (մեծ) թվականության սահմանման ժամանակին, գրել է, որ Հայաստանի Սովսես կաթողիկոսի պաշտոնավարման 4-րդ և Մեծ Գնունու մարզպանության 10-րդ տարում, երբ համաշխարհային թվարկությամբ 553 թ. էր, տոնացույցի լրանալու պատճառով շփոթ էր առաջացել տոների

հաշվումների մեջ, հարկ եղավ տոմարական փոփոխություններ կատարել, հայկական թվական սահմանել. այգպիսով ուղղեցին տոների շփոթումները: Այդ նպատակով գիտնականների մի խումբ էասի գլխավորությամբ 10 տարի անց կազմեց հիմնահարապակ կոչված տոնացույցը: Այստեղ նկատելի է բնագրային անկանոնություն: 553 թ. Հայաստանում Մովսես անունով կաթողիկոս չկար: Ինչպես նշվել է սույն հոդվածի 11-րդ կետում, այդ ժամանակամիջոցում կաթողիկոսն էր Ներսես Բ Բագրևանդացին (548—557 թթ.), որի հրամանով հրավիրվել է Դվինի 554 (այլ տվյալով՝ 553) թ. հայտնի ժողովը, որտեղ էլ նրա նախաձեռնությամբ առաջարկվել է նաև տոմարական փոփոխություններ կատարել: Դա վերաբերել է նաև հայկական թվականության սահմանմանը: Այս առնչությամբ էլ կատարվել է շփոթումը: Այստեղ Ներսեսի փոխարեն հիշատակվել է Մովսես կաթողիկոսի անունը: Իհարկե, խոսքը վերաբերում է Մովսես Բ-ին, որն անվանվել է նաև Նղվարդցի: Ակնհայտ է պատմական իրողությունների շփոթը: Հայտնի է, որ Մովսես Բ-ը պաշտոնավարել է 571—604 թթ.: Նրա նախաձեռնությամբ Դվինի 584 թ. ժողովում հաստատվել է հայոց թվականությունը և պաշտոնապես գործածության մեջ դրվել: Եթե պատմիչը դա նկատի ունենար, ապա կլիներ Մովսեսի աթոռակալման ոչ թե 4-րդ, այլ 11-րդ տարին: Նշումն ավելի հարմար է գալիս Ներսես Բ-ին:

Այստեղ կասկած է հարուցում նաև Մժեժ Գնունուն վերագրված ժամանակը: Մեր պատմագրության մեջ Հայաստանի այս մարդպանի իշխելու ժամանակը ցույց է տրվում 517—548 կամ 519—535 թթ.⁵: Տվյալները որքան էլ հակասական լինեն, Մժեժ Գնունու պաշտոնավարման 10-րդ տարին բնավ չի համընկնում Մովսես Բ-ի, ինչպես նաև Ներսես Բ-ի աթոռակալության ժամանակներին:

14. Իր երկի ի գլխում Ստեփանոս Օրբելյանը համառոտակի խոսում է Սյունյաց Մաթուսաղա քերթող եպիսկոպոսին հաջորդած մի խումբ եպիսկոպոսների մասին, ընդհուպ մինչև VIII դարի նշանավոր մատենագիր-գիտնական Ստեփանոս Սյունեցին: Այդ գործիչների աթոռակալման ժամանակի մասին Մ. Բրոսեն նշում է իր կատարած ֆրանսերեն թարգմանության 60-րդ էջի տողատակի ծանոթագրության մեջ, որտեղ կան անճշտություններ: Այստեղ այդ բոլոր անճշտությունների վրա կանգ չենք առնում: Միայն իբրև բացահայտ նմուշ ուղղում ենք մատնացույց անել Ստեփանոս Սյունեցուն նախորդած երկու եպիսկոպոսներին վերագրվող տվյալները, քանի որ դրանք կարևոր են նաև հիշյալ նշանավոր գործչի ժամանակի ճիշտ պատկերացման համար: Այդ եպիսկոպոսներն են Անտոնիա երկրորդը և Հովհան երկրորդը, որոնցից առաջինի համար նշված են 729—736, իսկ երկրորդի համար՝ 736—745 թթ.: Պարզ է, որ Ստեփանոս Սյունեցուն նախորդած եպիսկոպոսների պաշտոնավարման թվականները 10 տարով այս կողմ են բերված: Ստեփանոս Օրբելյանը այդ գործչի եղբրական մահը մատնանշում է 735 թ.: Հասկանալի է, որ նրան անմիջապես նախորդած եպիսկոպոսը չէր կարող այդ թվականից հետո պաշտոնավարած լինել: Հետո Մ. Բրոսեն դա հաշվի է առնում 98-րդ էջի իր ծանոթագրությամբ (այլև ներածության մեջ): Բայց հակասություն է առաջ գալիս այդ երկու ծանոթագրությունների միջև:

15. ԼՀ գլխում պատմվում է, որ երբ արյունարբու Յուսուփը հարձակվում է մեր երկրի վրա, Սյունյաց գահերեց իշխան Սմբատը զորք հավաքելով ցանկանում է դիմակայել, սուկայն անհաջողություն է ունենում: Նա իր մայր Շուշանին, կնոջն ու երեխային (եղբոր ընտանիքի հետ) Երնջակի անտիկ բերդում ամրացնելուց հետո գնում է «առ աներն իւր Գագիկ ի Վասպուրական»: Այստեղ գործածված ահեհ բառը պետք է հասկանալ ոչ թե «մեկի կնոջ հայրը», ինչպես որ հասկացվում է այսօր, այլ «աներորդի»: Հեղինակին քաջ հայտնի է եղել, որ Սմբատ գահերեց իշխանի կինը՝ Սոփին, Վասպուրականի իշխան Դերենիկի դուստրն էր, թագավոր հռչակված Գագիկի բույրը: Եվ այդ մա-

⁵ Հմմտ. Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. հ. 3, Երևան, 1946, էջ 329:

սին նա գրել է հենց նույն տեղում, մի քիչ վերև: Այստեղ սխալ չկա: Բանն այն է, որ անհրաժեշտ էր հին լեզվում ունեցել է նաև «աներորդի» իմաստը, որ-
պիսի նշանակությամբ բազմիցս գործածվել է Օրբելյանից դեռ շատ առաջ:

16. Նույն իմ գլխում հիշատակություն կա Հայոց սպարապետ Շապուհ Բագրատունու որդի Աշոտի մասին: Շապուհ Բագրատունին Սմբատ I Բագրատունի թագավորի եղբայրն էր՝ այս Աշոտի հորեղբայրը: Աշոտը հոր մահից հետո սպարապետ դարձավ, կառուցեց Բագարանի և Կողբի եկեղեցիները և ալյն: Սակայն 910 թ. անձնատուր եղավ Յուսուփին, ապա սրանից թագ ստացավ և իրեն հայտարարեց Աշոտ II Բագրատունուց անկախ թագավոր: Սրանք կովեցին միայնաց դեմ, ի վերջո հաշտվեցին: Այս Աշոտը նստեց Դվինում (921 թ.), իսկ Աշոտ II-ը՝ Շիրակավանում: Նրա մասին գրել են Հովհաննես Դրասխանակերտցին, Ասողիկը և ուրիշներ: Օրբելյանի երկի բնագրում նա ներկայացված է որպես Սմբատ I Բագրատունի թագավորի եղբայր: Այդպես է և տպագրերում, և № 6271 ձեռագրում (չ 130բ), որը, իհարկե, ճիշտ չէ: Պետք է ուղղվի եղբորորդի:

17. ԾԲ գլխում պատմվում է, որ Գեղարքունիքում գտնվող Վաղավեր գյուղը, որ ժամանակին նվիրատրվել էր Տաթևի վանքին, տեղի Հակոբը փոխանակումով հանձնում է Սյունյաց իշխան Ջագիկին՝ Ջևանշերի որդուն և տեղը վերցնում է Տաշտակերտ գյուղը: Պատմիչը մեջ է բերում այդ գործարքին վերաբերող վճռագրի պատճենը, որի վերջում հիշված են վկաների, այդ թվում՝ Ջագիկի ու Վասակի անունները: Այսպես. «Եւ մեք Ջևանշեր և Վասակ՝ որդի տեառն Ջագիայ վկայ եմք այս արարուածիս»: Եթե գործարք կատարողը Ջագիկ III-ն է եղել, ապա այստեղ Վասակ անունը սխալմամբ է նշվել: Նրա տեղում պետք է լիներ Վահան, որովհետև Ջագիկ III-ի որդիներն էին Ջևանշերը և Վահանը: Այս Վահանի մասին պատմիչը հիշատակում է իր երկի իմ գլխում: Նա Ջևանշեր II-ի եղբայրն էր, երկուսն էլ՝ Բաղայ մեծ իշխան Ջագիկ III-ի որդիները:

18. XII դարի կոռնական գործիչ Հովհաննես Կապանեցի կոչված եպիսկոպոսի մասին Ստեփանոս Օրբելյանն իր գրքում հիշատակում է մի քանի տեղ: Նա որպես եպիսկոպոս պաշտոնավարում էր Բաղայ Կապան քաղաքի մոտ գտնվող Վահանավանքում: Սելջուկ-թուրքերի կողմից Կապանի գրավումից և ավերումից հետո նա փախչում է Վայոց ձորի Ամաղուի Ս. Կարապետ անապատը (Նորավանք): Նրա ժամանակաշրջանի և հատկապես մահվան ժամանակի մասին հայագիտության մեջ տարակարծություններ կան: Նրա մահվան թվականը Ղ. Ալիշանն ընդունում է 1155-ը⁶, ապա ավելի հավանական է համարում 1154-ը⁷, Հ. Աճառյանն ընդունում է 1214 թ.⁸: Նա հենվում է պատմիչի նշած մի տվյալի վրա: Օրբելյանն իր երկի ԿԴ գլխում այս եպիսկոպոսի գոռոնեություն մասին պատմելուց հետո գրում է. «Եւ այսպէս կեցեալ բազում ամս՝ վախճանի ի թուին Հայոց 663...», այսինքն՝ ընդհանուր 1214 թ., որը շատ ուշ է և անհավանական: Հավանաբար դա թյուրիմացության հետևանք է: Հովհաննես Կապանեցին չէր կարող այսքան երկար ապրած ու պաշտոնավարած լինել: Կան դրան հակասող փաստեր հենց նույն երկում: Պատմիչը գրում է. թե այս Հովհաննես Կապանեցի եպիսկոպոսը գնացել է Մահմուդ սուլթանի մոտ: Եթե նույնիսկ ընդունենք, որ այդ դեպքը տեղի է ունեցել սուլթանի իշխանության վերջին տարում (իսկ դա հայտնի է՝ 1131 թ.), թեկուզ և իր եպիսկոպոսության առաջին տարիներին, ապա դուրս կգա, որ նա աթոռակալել է 85—90 տարի, որը հազիվ թե հավանական լինի: Կամ՝ նույն գլխում, քիչ ներքև հեղինակը գրում է, որ հիշյալ եպիսկոպոսին պաշտոնով հաջորդել է տեղի Ստեփանոսը, այսինքն՝ Ստեփանոս երրորդը, որը, սակայն, սկսել է պաշտոնավարել 1168 թ.: Կան էլի ուրիշ հակասող փաստեր:

⁶ Տե՛ս Սխական, էջ 184:

⁷ Նույն տեղում, էջ 227, ծան.

⁸ Հայոց անձնանունների բառարան. հ. 3, էջ 580:

Հարցի ճիշտ լուծմանը կարող են նպաստել հենց սույն երկի ԿԳ գլխում առկա մի քանի տվյալներ: Դրանք հաստատում են, որ Հովհաննես Կապանցին պիտի մեռած լիներ 1168 թ. առաջ: Նախ հիշենք, որ այնտեղ ասվում է, որ Դրիգոր հինգերորդ եպիսկոպոսը մեռել է այս Հովհաննեսից հետո (1168 թ.) և թաղվել է նրա կողքին, ապա՝ Դրիգորին հաջորդած Ստեփանոս երրորդ եպիսկոպոսը, սկսելով աթոռակալել 1168 թ., գործել է նաև Ելտկուղ աթաբեկի ժամանակ, իսկ սրա իշխանության վերջին տարին էր 1175 թ.: Պարզ է, որ Հովհաննես Կապանցին չէր կարող այդ ժամանակ ապրած և աթոռակալած լինել:

19. Պատմիչն իր գրքի ԿԵ գլխում մեջ է բերում Ելտկուղի որդի Լիպարիտ մեծ իշխանի ընդարձակ արձանագրությունը, որտեղ նշված է հայոց 672 թ. (թիֆլիսյան հրատ., էջ 459), որը հավասար է 1223 թ.: Պահպանվել է այդ արձանագրության վիմական բնօրինակը Ամաղուի նորավանքում: Սակայն այստեղ նշված է ՈՀ, այսինքն՝ 1221 թ. ($\text{ՈՀ} = 670 + 551 = 1221$): Սա Ստեփանոս Օրբելյանի բերածից 2 տարով պակաս է դուրս դալիս: Հավանական պետք է համարել այն, որ վիմական արձանագրության մեջ Ո և Հ տառերի հետ եղել է նաև Բ տառը՝ ՈՀԲ: Վերջինիս վերծանումով կունենայինք պատմիչի նշած թվականը՝ 1223: Պարզ է, որ Օրբելյանի կենդանության օրոք այդ թվականը անվթար պիտի եղած լիներ (Բ-ով հանդերձ): Բայց հետագայում, ինչպես երևում է, վերջից Բ տառը եղծվել է ու ջնջվել, և այժմ այդպիսի տարբերություն է առաջանում: Ասենք նաև, որ արձանագրության վիմական բնագիրը և գրքային պատճենումը ղգալի տարբերություններ ունեն, որոնց մասին այստեղ չենք խոսում:

20. Ստեփանոս Օրբելյանը, անդրադառնալով Սյունյաց իշխանաց իշխան Տարսայիճի (իր հոր) երկրորդ ամուսնությանը, գրում է. «Սա (այսինքն՝ Տարսայիճը—Ա. Ա.) առեալ ղթագաւորն Վրաց Դաւիթ գնաց ի տունն իւաչենոյ, առ որդին մեծ իշխանին Ջալալին Աթաբէկն. և առնոյր զքոյր նորա ի կնութիւն զՄինա խաթունն առ կենօք առաջին ամուսնոյն» (գլ. ԿԶ, փարիզյան հրատ., հ. 2, էջ 170, թիֆլիսյան հրատ., էջ 424): Մոսկովյան հրատարակությունն ունի որոշ տարբերություններ: Այսպես. «Սա առեալ ղթագաւոր Վրաց Դաւիթ՝ գնաց ի տունն իւաչենոյ առ որդին մեծ իշխանին աթաբէկ Ջալալին և առնոյր զքոյր նորա ի կնութիւն՝ զՄինա խաթունն առ կենօք առաջին ամուսնոյն» (գլ. ԿԵ, էջ 310): Համեմատությունը ցույց է տալիս, որ ձեռագրին ավելի մոտ է կանգնած փարիզյան հրատարակության համապատասխան մասը: Մ 6271 ձեռագրում այսպես է. «Սա առեալ ղթագաւորն Դաւիթ գնաց ի տունն իւաչենոյ առ որդի մեծ իշխանին ջալալին աթաբակն և առնոյր զքոյր նորա ի կնութիւն զմէնա խաթունն առ կենօք առաջին ամուսնոյն» (էջ 280բ): Այստեղ գործածված աթաբեկ (Աթաբէկ) բառը շատերի կողմից ճիշտ չի հասկացվել: Բանն այն է, որ թուրքական այս փոխառությունը մեր լեզվում հանդես է եկել նախ որպես հասարակ և ապա՝ նաև հատուկ անուն, անձնանուն: Բառի ստուգաբանական իմաստն է «բեկի հայր», «թագավորի հայր», մեղա՛նում ավելի շատ կիրառվել է «փոխարքա», սելջուկյան և մոնղոլ-թաթարական տիրապետության շրջաններից՝ «անկախ իշխան» իմաստներով: Մեղա՛նում տարածված է եղել նաև նրա՝ իբրև անձնանվան կիրառությունը: Բնագրի մատնանշված հատվածում հենց այդպես է: Ոմանք կարծիք են, թե այստեղ դա վերադիր է Ջալալ հատուկ անվան համար՝ որպես պաշտոնի անվանում, տիրա՛ղոս: Այդպիսի ըմբռնման արդյունք է մոսկովյան հրատարակության ներկայացրած տարբերակը՝ «գնաց ի տունն իւաչենոյ առ որդի մեծ իշխանին աթաբէկ Ջալալին», այսինքն՝ «գնաց իւաչեն գավառը մեծ իշխան Ջալալ աթաբեկի որդու մոտ», որը ճշգրիտ ըմբռնում չէ: Այսպիսով սխալը գալիս է պաշտոնական տիրույթի և հատուկ անվան շփոթից: Այս Ջալալը մեր պատմության մեջ հայտնի դեմք է, XIII դարի նշանավոր գործիչ: Սա նույն ինքը իւաչենի

⁹ Տե՛ս Դիվան հայ վիմագրության, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. պրակ 3, Երևան, 1967, էջ 211:

մեծ իշխան Հասան-Ջալալ-Դոլան է։ Հայտնի է շինարարական և քաղաքական լայն գործունեությամբ։ Կառուցել է Գանձասարի նշանավոր վանքը (որն այժմ էլ կանգուն է Ադրբեջանական ՄՍՀ Լենային Ղարաբաղի ինքնավար Մարզի Մարտակերտի շրջանի Վանք գյուղի դիմացի բարձունքի վրա), նորոգել է Կե-շառույքի (Ծաղկածոր)՝ թաթարների կողմից ավերված վանքը և այլն։ Միջնորդ է եղել Հայոց Հեթում I թագավորի և մոնղոլ-թաթարական Բաշու զորավարի միջև։ Արդուն ղանի հրամանով 1261 թ. դաժան մահապատժի է ենթարկվել Ղազվինում։ Նա ունեցել է նաև աթաբեկի պաշտոնական տիտղոս։ Մեր բերած հատվածում Արաբեկ-ը նրա որդու անունն է։ Ջալալի այս Աթաբեկ որդու մասին պատմում է միջնադարյան մեր նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին¹⁰։ Հոր դաժան մահապատժից հետո Աթաբեկը հավատարիմ մարդիկ է ուղարկում Ղազվին և այնտեղից բերել է տալիս նրա քառատված մարմնի մնացորդները, թաղում Գանձասարի վանքում։ Այնուհետև ինքը նշանակվում է հոր տնտես։ Մինա խաթունը նրա քույրն էր։ Տարսայիճը Վրաց թագավորի հետ գնացել էր այս Աթաբեկի մոտ՝ Մինային իրեն կնություն բերելու։

Ուրեմն՝ բերված հատվածը պետք է հասկանալ այսպես. «Սա Վրաստանի թագավոր Դավթի ուղեկցությամբ գնաց խաչենի գավառը, մեծ իշխան Ջալալի որդի Աթաբեկի մոտ և նրա քույր Մինա խաթունին իրեն կին առավ, դեռ իր առաջին կնոջ կենդանության օրոք»։

Արաբեկ-ը որպես հասուկ անուն տարածված է եղել մեր ժողովրդի մեջ (այդ թվում՝ նաև Ղարաբաղյան հատվածում) հետագա դարերում ևս, ընդհուպ մինչև մեր ժամանակները։

21. Խոսելով Սինեաց իշխանաց իշխան Տարսայիճի վախճանի մասին՝ պատմիչը նշում է, որ այդ բազմաշնորհ մարդը շատ և շատ երևելի գործեր կատարելուց հետո վախճանվում է Արփա գյուղի իր ապարանքում և թաղվում նորավանքում, իր իսկ կառուցած դամբարանում, Սմբատ եղբոր կողքին, հայոց 739 (= 1290) թ. (զլ. Կ2, Թիֆլիսյան հրատ., էջ 430)։ Նկատենք, սակայն, որ այժմ չպահպանված, բայց ընդօրինակումով հայտնի տապանագրում թրվակալներ նշված է ՉԼԸ¹¹, որը հավասար է ոչ թե 1290, այլ՝ 1289 թ.։ Պետք է ենթադրել, որ վերծանման ժամանակ ՉԼԹ-ի Թ-ն սխալմամբ կարդացվել է Ը, որով և ստացվել է մեկ տարվա այդ տարբերությունը։ Այս նկատառումով որպես ճիշտ տվյալ պետք է ընդունել պատմիչի նշած թվականը՝ 739 (այսինքն՝ 1290)։

22. Աշխատության ԿԹ գլխում հեղինակը Շահապիվանի հայտնի ժողովի ղեկավարումը վերագրում է Հովհան Մանգակունի կաթողիկոսին (Թիֆլիսյան հրատ., էջ 453)։ Սակայն մեր պատմության մեջ հայտնի է, որ Հովհան Մանգակունին աթոռակալել է այդ ժողովից շատ ուշ։ Նա, հաջորդելով Գյուտ կաթողիկոսին, պաշտոնավարել է 478—490 թթ.։ Ինքն է վաղարշապատից կաթողիկոսական աթոռը փոխադրել Դվին։ Մասնակցել է Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբական պատերազմներին։ Մի ճակատամարտում էլ վիրավորվել է և այլն։ Այնպես որ նա իբրև կաթողիկոս չէր կարող ղեկավարած լինել Շահապիվանի ժողովը։ Իրականում այդ ժողովը կազմակերպել ու գլխավորել է Հովսեփ Հողոցմեցին, որը կաթողիկոսական տեղապահ էր, հետո էլ կաթողիկոս ճանաչվեց¹²։ Շահապիվանի ժողովը կայացել է 444 թ., որը Մանգակունու կաթողիկոսության առաջին տարվանից 34 տարի առաջ էր։

Մեղանում դա քաղկեդոնականության դեմ ուղղված առաջին ժողովն էր։

23. Քաղկեդոնականության դեմ ուղղված ժողովը պատմիչը նույն տեղում ճիշտ կերպով հիշատակում է Բաբեկեն կաթողիկոսի գլխավորությամբ։ Սակայն այստեղ խառնված են մի շարք փաստեր։ Նախ՝ հեղինակը գրում է,

¹⁰ Տե՛ս Կիրակոս Դանձակեցի. Պատմութիւն Հայոց, աշխատասիրոթյամբ Կ. Մե-լիք-Օհանջանյանի. Երևան, 1961, զլ. ԿԴ, էջ 392։

¹¹ Հմմտ. Դիվան հայ վիմագրության. պրակ 3, էջ 236, արձանագրություն № 779։

¹² Տե՛ս Մ. Օրմանյան. Հայոց եկեղեցին. Կոստանդնուպոլիս, 1912, էջ 197։

թե ժողովը տեղի է ունեցել նոր քաղաքում: Բայց պարզ երևում է, որ խոսքը վերաբերում է Դվինի առաջին ժողովին, որը Բաբկեն Ա-ի նախագահությամբ տեղի է ունեցել 506 թ.: Մեր պատմության մեջ նոր քաղաք անվամբ հայտնի է Վաղարշապատ քաղաքը, որն այդ ժամանակ այլևս կաթողիկոսական աթոռանիստ չէր: Այս շփոթումը գալիս է Օրբելյանի երկին նախորդած որոշ աղբյուրներից: Հիշենք, օրինակ, Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց»-ը¹³: Այս շփոթ կա ժողովի մասնակիցների հարցում: Պատմիչը գրում է, թե նրան մասնակցել են նաև Պարսկաստանում բնակված ասորի ուղղադավան քրիստոնյաները: Մինչդեռ հայոց հետ մեր ժողովին եկել էին Վրաց և Աղվանից կրոնական առաջնորդները, իսկ ասորիները դրանից որոշ ժամանակ անց դիմում են Բաբկեն կաթողիկոսին՝ խնդրելով իրենց օգնել նեստորականության դեմ պայքարելու, և իրենք էլ լիովին ընդունել են ժողովի որոշումները՝ քաղկեդոնական դավանանքի մերժումով:

24. Քննարկվող երկի ԿԸ գլխում հեղինակը, պատմելով Հոռմկա բերդում Հայոց կաթողիկոսական աթոռի հիմնման մասին, գրում է. «...Այս աթոռ որ ի Հոռմկային եղաւ, հաստատեալ էր ի սրբոյն Գրիգորիսէ կաթողիկոսէ որ և Վկայասէր կոչեցաւ... Սա գանձագին արարեալ ի կնոջէ և յորդոյ մեծ իշխանինց փռանգ որ Զաւարին կոչիր, զբերդս զայս եղ ի սմա աթոռ և հաստատեաց տուն հայրապետաց Հայոց, յորում նստան կաթողիկոսք տան. առաջինն՝ Գրիգորիս, և ապա՝ եղբայր իւր Ներսէս, և ապա՝ եղբորորդի նոցա Գրիգորիս, որ շինեաց զեկեղեցին, և ապա՝ Տղայն Գրիգոր որ անկաւ ընդ քարն Կոպիտառայ...» (թիֆլիսյան հրատ., էջ 445—446):

Այս հատվածը ճիշտ ընկալելու համար լրացուցիչ բացատրության և ճշտման կարիք է զգացվում: Աթոռը հաստատող Գրիգոր կաթողիկոսի մասին ասված է «որ և Վկայասէր կոչեցաւ»: Պետք է լինեն Փոքր վկայասէր: Սա Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսն էր, Ասիիրատ իշխանի որդին, Ներսես Շնորհալու ավագ եղբայրը: Աթոռակալել է 1113—1166 թթ.: Հոռմկայի բերդը գնելուց հետո կաթողիկոսական աթոռն այնտեղ է փոխադրել 1147 թ.: Իր քեռի Գրիգորիս Բ-ի հետևողությամբ գործունեություն ծավալելու պատճառով անվանվել է Փոքր վկայասէր: Ստեփանոս Օրբելյանը նրա հիշյալ մականունը ներկայացրել է առանց Փոքր բաղադրիչի: Դա էլ շփոթության տեղիք է տվել: Այսպես, երկի առաջին հրատարակիչ Կ. Շահնազարյանցը, այս Փոքր վկայասէրին շփոթելով Գրիգորիս Բ Վկայասէրի հետ, անհիմն է համարում նրան Հոռմկայի աթոռի հիմնադիր ընդունելը, բայց այնուհետև ճիշտ տվյալներ է մատնանշում նրա մասին (փարիզյան հրատ., հ. 2, էջ 358, ծան. 153):

Առավել բացահայտ շփոթ է նկատվում հատվածի շարունակության մեջ: Իբրև Ներսես կաթողիկոսի (Ներսես Դ) հաջորդ հիշատակված է նրա և իր եղբայր Գրիգորիսի եղբորորդի Գրիգորիսը, իսկ որպես սրան հաջորդող կաթողիկոս՝ Գրիգոր Տղան, որին էլ շփոթմամբ վերագրված է Կոպիտառի ժայռից գահավեժ լինելը: Իրականում այդպես չի եղել: Հոռմկայի աթոռի հիմնադիրը, ինչպես վերը նշվեց, Գրիգոր Գ-ն էր, որը նախ աթոռակալում էր Մովսես և հետո տեղափոխվեց Հոռմկա: Նրան հաջորդել է իր եղբայր Ներսեսը, որը Ներսես Դ կաթողիկոսն էր, նույն ինքը միջնադարյան մեր հռչակավոր բանաստեղծ և մատենագիր Ներսես Շնորհալին. անվանվել է նաև Կլայեցի. աթոռակալել է 1166—1173 թթ.: Նրան հաջորդել է իր եղբորորդի Գրիգոր Տղան, որը Գրիգոր Գ կաթողիկոսն էր. աթոռակալել է 1173—1193 թթ.: Հայտնի է նաև որպես բանաստեղծ ու մատենագիր: Օրբելյանի երկում ոչ միայն խառնված է նրա տեղը, այլև նրան հաջորդած կաթողիկոսին վերաբերող դեպքը: Նրանից հետո աթոռակալել է իր քեռորդի Գրիգորիսը՝ Գրիգորիս Ե կաթողիկոսը, որը, սակայն, սխալմամբ ներկայացվել է նրանից առաջ: Նա իշխել է ընդամենը մեկ տարի՝ 1193—1194 թթ.: Հակառակվել է Կիլիկիայի թագավոր Լևոն II-ի քաղաքականությանը: Նրա հրամանով էլ ձերբակալվել ու տարվել է Կոպի-

13. Թիֆլիս, 1913, էջ 62:

տառի բերդը: Այստեղ նրան թունավորելով սպանել են՝ լուր տարածելով, թե քարավեժ է եղել փախչելու փորձ կատարելիս: Նա հայտնի է նաև Քառավեժ մականունով: Այդ դեպքն ու մականունը կապ չունեն Գրիգոր Տղայի հետ:

25. Աշխատության մեզ հասած բնագիրը թե՛ բոլոր տպագրերում և թե՛ N 6271 ավագույն ձևագրում կե գլխի վերջին մասում պակասավոր է: Այստեղ պատմվում է, որ հայոց Հակոբ Ա կաթողիկոսը (1268—1286 թթ.) հատուկ կոնդակով հրամայում է կարգալույծ անել Ապրակունիքում ապօրինի կերպով հաստատված Հովհաննես Ապրակունեցի եպիսկոպոսին: Ըստ պատմիչի շարադրանքի՝ այնուհետև պիտի հաջորդեն կոնդակի պատճենը, որը, սակայն, այստեղ չկա: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ երկի փարիզյան հրատարակության մեջ այս մասում պակասում է ավելի շատ բան: Այնտեղ գլուխը վերջանում է «Գրայեկի քարոյ այգույն զվերին բաժինն» բառերով: Մնացածը չկա: Համեմատելով N 6271 ձևագրի հետ՝ նկատեցինք, որ պակասում է ձևագրական 136 տող (երկսյուն գրությամբ)՝ սկսած 245-րդ էջի վերջին տողից մինչև 246-ա էջը: Սոսկովյան հրատարակությունն այստեղ համընկնում է ձևագրին: Այս հրատարակության մեջ ուղղ մասը կ'ի գլխի 267-րդ էջի նախավերջին տողի «...և այլ յոլով երախտիս ցուցանեն» արտահայտությունից մինչև գլխի վերջը կազմում է 50 տպագիր տող: Նպատակահամար չենք համարում այստեղ մեջ բերել այդ ամբողջը: Ընթերցողը կարող է օգտվել հիշյալ հրատարակությունից:

Այսքանով, իհարկե, չեն սպառվում մեր դիտարկումները: Սակայն այստեղ պիտի վերջակետ դնենք: Սույն հոդվածով ներկայացրել ենք հատկապես այն դիտողությունները, որոնք թերևս ամենի օգտակար կլինեն այն նպատակի համար, որի մասին նշվեց հոդվածի սկզբնամասում:

ТЕКСТОЛОГИЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ НАД ИСТОРИЧЕСКИМ ПРОИЗВЕДЕНИЕМ СТЕПАНОСА ОРБЕЛЯНА

Член-корр. АН АрмССР А. А. АБРААМЯН

Резюме

Известный труд средневекового армянского историка Степаноса Орбеляна, содержащий историю Сюника, одной из обширных областей Армении, по охваченному материалу и научным принципам изложения имеет большую ценность. Это сочинение дошло до нас во многих списках, большая часть которых хранится в ереванском Матенадаране. Оно было опубликовано трижды (в Париже, Москве и Тифлисе), однако, к сожалению, до сих пор не существует критического издания этого ценного памятника. В нем бросаются в глаза темные места, которые препятствуют правильному пониманию содержания. Большинство из них — искажения, внесенные писцами, но, может быть, некоторые неверные факты идут от авторского текста. В данной статье представлены, с целью облегчить его чтение, некоторые результаты текстологического исследования памятника в виде текстуальных и фактических исправлений, а также толкований.